

ՀԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱԾՏԱՄՈՒՆՔԸ

(Ցեսութիւն հայ սովորութեական իրաւունքից)

Խ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

I.

Հայ նահապետական գերդաստանն, ինչպէս և ընտանիքը—դա այն շտեմարանն է, ուր զարմանալի տոկոսնութեամբ պահուել—պահպանուել են հայ սովորութեական իրաւունքի բեկորները: Նահապետական գերդաստանն իւր ամբողջ էութեամբ ներկայացնում է կուլտուրական զարգացման այնպիսի մի շրջան, որտեղ հասարակական փոխադարձ յարաբերութիւնները, սոցիալ-քաղաքական աշխարհայեացքի հետեանքները կենդրոնանում են բացառապէս ընտանեկան համայնքի շուրջը:

Ընտանեկան համայնքը զարգացել է ռէալ-մատերիալիստական գործոնների շնորհիւ, սակայն, այդ համայնքների բաղկացուցիչ անդամների պատմական տեսակէտից նայած, իրենց համայնքը հիմնուած էր միանգամայն այլ սկզբունքների վրայ, ամուսնու զարգանում միանգամայն ուրիշ աշխարհայեացքների համաձայն: Դա կրօնն էր, կրօնական պաշտամունքների մի ամբողջ դաւանանք, որը նախնական հասարակական կազմակերպութեան ամբողջ շէնքն էր կառուցանել և մարդկային ըմբռնանութեան մէջ բարձրացրել իրաւունքի ամբողջ իմաստը: Մարդկային մտաւոր կեանքը իւր զարգացման ընթացքում ունեցել է

աստիճաններ, երբ հասարակական ու բնական բոլոր երեւոյթները բացատրուում էին աստուածային ոգու ներկայութեամբ, կրօնական պաշտամունքի նշանակութիւններով: Մարդկային այդ միտքն անզօր էր այլապէս վերլուծելու իրական երևոյթները, և այնտեղ, ուր ժամանակակից գիտութիւնն, իւր բովանդակ պաշարով զինուած, անդամահատում է քաղաքակրթութեան զարգացման գործոններն և դնում նոցա նիւթական հիմունքները, այնտեղ մի ժամանակ միմիայն գերբնական ոգին էր տիրապետում, աստուածային խորհրդաւոր ոյժերն էին իրենց մասին զգալ տալիս: Հասարակական զարգացման պատմութիւնն անցնում էր ոչ թէ մարդկային սառն բանականութեան, արամիա դատողութեան բովով, այլ մտաւոր երևակայութեան, զգացողական ազդակների լայնարձակ ասպարիզով:

Կրօնական այդ փիլիսոփայութիւնն իւր մեծ դերը խաղաց մարդկային քաղաքակրթութեան զարգացման բոլոր կողմերում. և տակաւին այսօր հասարակական կազմի, մարդկային յարաբերութիւնների բազմաթիւ շրջաններում նա պահպանում է իւր գոյութիւնն: Այդ կողմից իրաւունքի պատմութիւնը մարդկային հոգու և հաւատի պատմութեան էջերում ներկայացնում է մի խրատայից օրինակ: Իրաւունքի զարգացման մէջ՝ մարդկային իդէալական այդ աշխարհայեացքում՝ ոչ մի գործոն այն մեծ դերը չի կատարել, ինչ որ վիճակուել էր կրօնին, կրօնական պաշտամունքներին: Կրօնական վարդապետութիւնը զարմանալի ելեէջներով առաջնորդել է իրաւունքի բազմատեսակ անկիւններից դէպի լոյս աշխարհ: Ի՞նչ են ներկայացնում ամբողջ նախնի դատաւարութեան գործերը. դժբա բոլորը տողորուած ու սննուած էին կրօնական մտապատկերներով, քիչ հաւատի ու պաշտամունքի ծէսերով. դատաւարութեան բովանդակ հանդիսաւոր ձևականութիւնն— կրօնական է, այսպէս անուանած աստուածային վճիռը (Gottesurtheil)— կրօնական է, երգումն— կրօնական է, օրգայիան— կրօնական է... Ի՞նչ է պատժական իրաւունքն

իւր արեան վրէժի ու փրկանքի սովորութիւններով, եթէ ոչ նոյն կրօնական մտածողութեան երևոյթներէից մէկը:

Աւա առաւել գերակշռող դեր է խաղում կրօնական աշխարհայեացքն ընտանեկան համայնքի կազմի ու զարգացման վրայ: Ընտանիքի ծագման պատմութիւնը քննելիս տեսնում ենք, որ կրօնական հայեացքներն այնպիսի մի մեծ ազդեցութիւն են ունեցել ընտանիքի կազմակերպութեան, նրա բարքերի ու սովորութիւնների, նրա մտաւոր և նոյն իսկ տնտեսական ձևերի վրայ, որ միանգամայն բացայայտ է դառնում այն մեծ կապը, որ առաջ էր եկել հասարակական կազմակերպութիւնների ու կրօնական պաշտամունքների միջև: Ժամանակակից ընտանիքն էլ զարգանալով նահապետական գերդաստանից պարփակում է իւր մէջ տակաւին այդ կրօնական հայեացքները, որոնք երբեմն նահապետական գերդաստանի էութիւնն էին ընտրողում:

Արդի գիտութիւնն ի հարկէ միանգամայն այլ կերպով է նայում ընտանեկան համայնքի կրօնական պաշտամունքների նշանակութեան վրայ: Մինչդեռ նախնական մարդիկ, զսնուելով ստոր կուլտուրական աստիճանի վրայ, ըմբռնում էին այդ կրօնական պատկերացումները, որպէս հիմնաքարեր, որոնց վրայ ստեղծուել ու աճել են ընտանեկան համայնքները, ըմբռնում էին, որպէս իրօք զոյութիւն ունեցող գերբնական ոյժեր, առանց որոնց ընտանեկան կազմակերպութիւնների յարատեւութիւնն ի չիք է դառնում,—ընդհակառակն մենք, զուրս գալով այդ շրջանի նախնական աշխարհայեացքի ներգործութիւնից, ընդունում ենք, որ ընտանեկան համայնքի ծագման ու զարգացման գործոնները լոկ մատերեայիստական հողի վրայ են հիմնուած: Տնտեսական պայմանները, հասարակական արտադրողական եղանակները — ահա այն անհրաժեշտ գործող ոյժերը, որոնք ըստեղծում էին հասարակական կարգեր ու կազմակերպում արիւնակից ազգականների դաշնակցութիւններ՝ ցեղեր, սերունդներ: Աւ եթէ այսօր հետազօտում ենք հայ նահապետական գերդաստանի կրօնական կազմը,—գա տնում ենք

խորն համոզուած լինելով, որ այն ձևերը, որոնց մէջ կաղապարուել են կրօնական պաշտամունքները, միակն են, որոնք յիշեցնում են այդ պաշտամունքների գոյացման մօմենտների հասարակական դրութիւնը: Հասարակական, ընտանեկան կեանքի շատ և շատ երևոյթները կուլտուրական զարգացման տակ կարող են վերանալ, չքանալ, սակայն նրանց հետքերն այնուամենայնիւ պահպանուած են պաշտամունքների, կուլտի մէջ:

Ուսումնասիրելով այս կամ այն ժողովրդի ընտանեկան պաշտամունքները, մենք հնարաւորութիւն ենք ունենում թափանցել նրա մշուշապատ անցեալի պատմութեան մէջ, բարձրացնել այն վարագոյրը, որով ծածկւում էին մեր աչքերից նախնի հայ ընտանեկան համայնքի էթիկական ու իրաւաբանական հայեացքները: Հայ նահապետական գերդաստանի պաշտամունքները մանրամասնօրէն վերլուծելիս, ինչպէս և սպասելի էր, գտնում ենք այդտեղ սերնդական կազմակերպութեան բոլոր մնացորդները:

Սերնդական-ցեղական կազմակերպութիւնները իրենց համեմատ կրօնական աշխարհայեացքով գոյութիւն էին ունեցել այնպիսի մի կուլտուրական շրջանում, երբ տիրապետում էր հոգեպաշտութեան (animisme) սկզբունքը: Այն հիմքը, որի վրայ ծագել ու ծաղկել էին նախնական կրօնական հայեացքները, կայանում էր նրանում, որ նախնի մարդը խորն համոզուած էր, թէ շրջապատող տեսանելի առարկաները, ինչպէս և ինքը, օժտուած էին զգացողութեամբ և զգացմունքներով: Յիշեալ համոզմունքը զրգում էր նրան անձնաւորացնել թէ անշունչ առարկաները և թէ բնութեան բոլոր երևոյթները: Ահա այստեղ մարդուս մտապատկերները կենդրոնանում էին միայն գերբնական ոգիների գաղափարի շուրջը, աներևոյթ ոյժերի մարդուս վրայ ունեցած ներգործութեան հաւատի վրայ: Այդ հոգեպաշտական հիմունքներից բխում էր մի կողմից՝ հաւատ, որ առանձին անշունչ առարկաներն ունեն իրենց անձնաւորութիւնն, իրենց կրկնակը, ճեսը», օժտուած գերբնական

յատկութիւններով: Միւս կողմից էլ՝ համոզմունք, որ մարդկային արարածը բաղկացած է երկուորեակից — հոգուց, երկրորդ թեսա-ից, որը կարող է մարդուն թողնել ժամանակաւորապէս, ինչպէս քնի միջոցին, և մշտնջենապէս, ինչպէս մահուան վայրկեանին: Վերջին այս համոզմունքը ստիպում էր մարդուն հաւատալ հոգիների գոյութեանը, հաւատալ, որ հոգիները ընդունակ են ապրելու մարդու մահուանից յետոյ, և այսպէս թէ այնպէս ազդել կենդանի մնացած արարածների վրայ: Գերբնական ոյժերի, ոգիների գոյութեան հաւատը լցնում էր մարդուն ահով ու խորհրդաւոր ակնածութեամբ և սա պաշտում էր մեռեալներին, պաշտում ամենայն սրբութեամբ նոցա հոգիներին: Ինչպէս որ կենդանի միջոցներին այդ մեռեալները հանապազ շփուում, ապրում էին իրենց սերնդակիցների հետ, իրենց ազգակիցների շրջանում, նոյնպէս էլ նրանց հոգիներն այժմ, երբ մարմինն այլ ևս գոյութիւն չունի, շարունակում են նոյն կեանքով անտեսանելի ապրել կենդանի մնացած սերնդակիցների շրջանում: Այստեղից առաջ է դալիս նախաայրերի կուլտը, նահապետների պաշտամունքը, որ սերնդական կազմակերպութեան հիմնաքարն է կազմում¹⁾։

Մենք շեշտեցինք, որ ուշագրութեան կառնենք հայ նահապետական գերդաստանը. սակայն որքան յայտնի է, նահապետական գերդաստանը ներկայումս տարրալուծւում է, տեղի տալով ընտանեկան մանր կազմակերպութիւններին: Բայց քանի որ Հայաստանի շատ խուլ անկիւններում առժամանակ գերիշխում են բնական տնտեսութեան ձևերը, նահապետական գերդաստանի կազմն էլ տակաւին կարողանում է պահպանել իւր գոյութիւնը: Այսպիսի հանգամանքներում անտարակոյս է, որ անհատական ու մանր ընտանեկան կազմակերպութիւններն էլ ազատուած չեն լինիլ իսպառ այն սովորութիւններից ու բար-

¹⁾ Հոգեպաշտութեան մասին տւելի մանրամասն տես: Таф-лоръ — Первобытная культура հատ. II, գլուխներ XI—XVII. նաև Харузинъ — Этнография, выпускъ II և IV.

քերից, այն ընտանեկան ու սերնդական պաշտամունքներից, որոնք տիրապետում էին նահապետական գերդաստանում: Դարերով, երկար ու ձիգ ժամանակներով սրնուած մտապատկերները, փայփայտած աշխարհայեացքները անկարող են մէկէնիմէկ յեղաշրջուիլ, տապալուիլ...

Ուստի ներկայ տեսութեան մէջ մենք խստիւ չենք սահմանադրի հայ նահապետական գերդաստանի ու անհատական ընտանիքի պաշտամունքների շրջանները: Գործածելով հայ ընտանիք բառը, մենք սրան տալիս ենք ամենալայն իմաստ, ենթադրելով այդտեղ նաև նահապետական գերդաստանի կազմին վերաբերեալ պաշտամունքները, քանի որ, ինչպէս վերը նկատեցինք, Հայաստանում նահապետական գերդաստանը տեղ տեղ տակաւին պահպանում է իւր վերջին գոյութիւնը անհատական ընտանիքներին կից և քանի որ այդ երկու տեսակ ընտանեկան կազմերի ներքին աշխարհայեացքներն ու հաւատալիքները դեռ ևս իրարից չեն զտուել, այլ ներկայացնում են միևնոյն ու համանման մտածողութեան արգասիքներ, հոմանիշ բովանդակութեան ձևեր:

II.

Հայ ժողովուրդը հաւատում է, որ մարդուս մահուամբ նրա հոգին շարունակում է իւր գոյութիւնը, շարունակում է ապրել: Բայց ճիշտեղ և ի՞նչպէս է անցնում այդ կեանքը: Եթէ նայենք առերես այն հաւատալիքների վրայ, որոնք շրջում են ժողովրդի բերնում, կրլսենք, որ հոգիները համբառնում են դէպի երկինք: Վարանդայում հաւատում են՝ Վհոգին բերանից դուրս գալուց յետոյ մինչև այդ կատարելը սաւառնում է դիակի շուրջը և երբ, միև օրը, վաղ առաւօտեան, տան մեծը գալիս է երեք անգամ վնյրդաւում, ապահով կերպով սլանում է դէպի երկինք՝¹⁾ Նոյնպէս և Զանգեզուրում, հետեւեալ օրը վաղ լուսաբացին

¹⁾ Ե. Լալայեան—Վարանդա, եր. 185.

ննջեցեալի ազգականներէց մինը գնում է գերեզմանատուն, համրուրում է գերեզմանը, երեք անգամ վայ բղաւում և վերադառնում տուն¹⁾։ Նոյն հայեացքն է տիրում Զաւախեցիների մէջ. հոգին սաւառնում է դիակի շուրջը մինչև մարմինն հոգին յանձնելը և երբ «Փառք ի բարձունս» ասում են, թուշում է նրուադէմ, երեք անգամ համրուրում ու գերեզմանն և այնտեղ մնում 40 օր, մինչև ննջեցեալի քառասունքը լրանայ։ Յետոյ արդէն վերադառնում է երկինք, եօթն օր ճանապարհ գնալով²⁾։ Հոմանիշ հաւատալիքներ ունեն և միւս հայ դաւառների բնակիչները, ուստի աւելորդ ենք համարում մի առ մի այստեղ առաջ բերել։

Ժողովրդի վերորերեալ հայեացքը հոգիների կայանի մասին, եթէ դա խորագնին քննենք, նորագոյն ժամանակների արդասիքներ են և ձևակերպուել են բացառապէս քրիստոնէութեան ազդեցութեան տակ։ Մինչդեռ աւելի հին, նախնական հաւատալիքների համեմատ մարդու հոգին ոչ թէ երկնքում, ոչ թէ անծայր ու անորոշ հեռաւորութեան վրայ էր իւր գոյութիւնը շարունակում, այլ հէնց այս երկրում, մարդկանց մէջ, իւր ազգակիցների հարևանութեան մօտ էր անցկացնում կեանքը, ապրում գետնի տակ։ Այդպէս էին քարոզում հնդկական Վեդայի մաղթանքները, այդպէս էին համոզուած հին յոյներն ու հռովմէացիները։ Կրկերոնն իւր Tusc. (I, 16) մէջ ասում է. sub terra censebant reliquam vitam agi mortuorum, և մի նոյն ժամանակ, շարունակում է նա՝ այնքան խորն էր այդ հաւատքը արմատացած ժողովրդի մէջ, որ յետագայում, երբ արդէն մտել էր դիակների այրման սովորութիւնն, այնուամենայնիւ կարծում էին, որ հոգիները կրկին գնում էին գետնի տակը ապրելու³⁾։ Նոյնանման

1) Ն. Լալայան—Ձանգեղուրի գաւառ, եր. 104.

2) Նոյն—Ջաւախք, եր. 205.

3) Фюстель де Куланж - Древняя гражданская община, եր. 5.

էին հաւատում և հին հայերը. դա բացայայտ է դառնում այն նախապաշարումներից, թագման այն ծիսակատարութիւններից, որոնք տեղի են ունենում այսօր հայերիս մէջ. Նոյն իսկ վերը յիշած երկու օրինակներից Վարանդայի ու Ջաւախքի հաւատալիքների վերաբերմամբ կարող ենք մի քանի կէտեր առաջ բերել, որոնք մեզ իրաւունք են տալիս ապացուցանելու մեր առաջադրած կարծիքը:

Թագման ծէսերը հայոց մէջ ցոյց են տալիս, որ ժողովուրդը հաւատում է, թէ իջեցնելով մեռեալի մարմինը գերեզման, թաղում են նրա հետ և հողուն, որը շարունակում է ինքնուրոյն գոյութիւն ունենալ իրեն կենդանի արարած: Գրեթէ ամեն տեղ հայերը սովորութիւն ունեն ննջեցեալի ձեռքերին մի մի մոմ դնելու, որպէսզի նրան միւս աշխարհում, նոր կայանում, մութ դեմնի տակ լոյս լինի: Այդ մասին Վարանդայում ասում են, որ մեռելը ժմիւս աշխարհում իւր բարեկամ ննջեցեալներին ճրագի լուսով տեսնի՝¹⁾:

Հին Հռովմէացիները ննջեցեալներին գետին իջեցնելիս զանազան բարեմաղթութիւններ էին անում այն համոզմունքով, որ մեռեալի հողին գետնի տակ երջանիկ կեանք վայելի: Այդ նպատակով յուղարկաւորութեան ծիսի աւարտին սովորութիւն ունէին երեք անգամ կանչել մեռեալի հողուն նրա անունով: Վերջապէս յայտնի են այն կլասիկական խօսքերը, որոնք ստէպ աթմա էլ են գործածում. *sit tibi terra levis* կամ *tenuem et sine pondere terram*. Հոմանիշ սովորութիւններ տեղի են ունենում մեր ժամանակակից հայ զաւառներում: Վարանդայում, երբ ննջեցեալին իջեցնում են գերեզման, բոլոր յուղարկաւորողները մի մի բուռ հող են ձգում գիակի վրայ, ասելով. «Աստուած ճանապարհդ բարի անի, բարե տոր մեր հին ննջեցեալին»²⁾: Շատ տեղերում, ինչպէս Բորչալիում, Գանձակի գաւառում, գիակը լուսնային միշտ ար-

¹⁾ Եր. Լալայեան—Վարանդա, եր. 179.

²⁾ Նոյն—Վարանդա, եր. 182.

տառանում են բնորոշ խօսքեր, որոնք ամբարն նմանութիւն ունեն վերը յիշած լատինական բացականչութիւններին.

«Քարդ քաղած ընի,

«Հոգդ մաղած ընի,

«Դատաստանդ քաղցր ընի:

«Գնալի ճանապարհդ բարի ընի»¹⁾:

Զանգեզուրում ու Վարանդայում թաղման միւս օրը սպաւորը գնում է և թարմ գերեզմանի վրայ երեք անգամ վոյ բացականչում, որով հանգստացնում են մեռեալի հոգին: Վերջապէս աւելորդ չի լինիլ այստեղ յիշել այն հանրածանօթ բառերը, որոնք գործածուելիս են եղել և դեռ գործածոււմ են գրեթէ բոլոր ժողովուրդների մէջ. այն է, որ դամբարանների վրայ սովորութիւն ունին գրելու կամ ասելու՝ «աստ հանգչում է» և կամ, ինչպէս հայերիս մէջ, գերեզմանն այլապէս կոչում են հանգստարան, մի տեղ ուր հոգին հանգստութիւն է գտնոււմ:

Յիրաւի, որ հոգին, ինչպէս ժողովուրդն է նախապաշարուած, միայն դիակի թաղումով է հանգստութիւն գրաւում, գրան ապացոյց կարող է ծառայել այն հաւատալիքը, որ մեռեալն անպայման պէտք է թաղուի, հոգին յանձնուի, ապա թէ ոչ նրա հոգին ոչ մի կայան, ոչ մի հանգստութեան տեղ չունենալով թափառաշրջիկ պէտք է տանջուի և թշնամանայ կենդանի մնացածներին: Վարանդայի, Զանգեզուրի, Գանձակի, Զաւարքի և այլուր հայերը համոզուած են, որ մեռեալների հոգիները սաւառնում են իրենց դիակների շուրջը մինչև հոգին յանձնելը: Ուրեմն մեռեալների մարմինները թաղուելով, նրանց հոգիներն էլ մանելու են գետին: Ուստի մեռեալին հոգին յանձնելիս անհրաժեշտ է կատարել ամենայն խստութեամբ այն բոլոր ծէսերն ու պաշտամունքները, որոնք անպայման պահանջոււմ են ժողովրդի հաւատալիքներով, որպէսզի հոգիները բաւական մեան կենդանի ապրողներից: Այդ հիման վրայ մե-

¹⁾ Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, հատ. Բ. եր. 94: Բորչալուի գաւառ, Ազգագրական Հանդէս՝ X գ. 1903 թ. եր. 169.

ուեալներին, մանաւանդ սպանուածներին, ինչպէս Զանգեզուրի հայերն են հաւատում, պէտք է ամբողջովին հողին յանձնել, Սթէ նրա մարմնի որեւէ մասը, թէկուզ մի եղունգը, անթաղ մնայ դուրսը, հողին անհանգիստ կը լինի և բազմաթիւ չարիքների պատճառ կը դառնայ. նա իւր անից մի նոր մեռեալ կը րանի¹⁾։

Այն հաւատալիքը, թէ մեռածների հոգիները սաւառնում են դիակների շուրջը մինչև թաղուիլը, գոյութիւն է ունեցել, որպէս կարելի է ենթադրել, նաև հին հայերի մէջ. Դա Յարալէզների պաշտամունքն է։ Յարալէզները դերձնական հոգիներ էին, որոնք լիզելով պատերազմի դաշտում ընկած մարդկանց դիակները, կենդանացնում էին սրանց։ Մտաբերենք Մովսէս Խորենացուց Արայ գեղեցիկ և Շամիրամի վիպասանական պատմութիւնը, Վրայց կուրի մէջ յաղթուեցաւ Արայի զօրքը, և Արան մեռաւ պատերազմի մէջ Շամիրամի զինուորներից։ Յաղթութիւնից յետոյ տիկինը դիակապուտներին ուղարկեց ճակատամարտի տեղը... Արային քաջ զինուորների մէջ մեռած գտան։ Բայց երբ հայոց զօրքերը միւս անգամ պատերազմի գրգռուեցան Տիկին Շամիրամի դէմ Արայի մահի համար վրէժ առնելու, Շամիրամն ասաց. իմ աստուածներին հրամայեցի լիզել Արայի վէրքերը և կենդանացնել. Յնորուած լինելով տուփական ցանկութեամբ, Շամիրամը միանգամայն յոյս ունէր Արային կենդանացնելու իր կախարդութեամբ²⁾։ Մովսէս Խորենացու յետագայ խօսքերից պարզոււմ է, որ այս դէպքում Շամիրամը դիմում է այդ հաւատալիքին, իբրև տեղական, Հայաստանում իրենից առաջ գոյութիւն ունեցող մի պաշտամունքին, որպէսզի հնարաւորութիւն ունենայ հանգստացնել զրգուած հայերին։

Պատերազմում ընկածների կենդանանալու հաւատա-

¹⁾ Сборникъ матеріаловъ по описанію мѣстн. и наро-
довъ Кавказа. Соевѣрія въ Зангезурскомъ уѣздѣ.

²⁾ Մովսէս Խորենացու պատմ. գիրք Ա, գլ. ԺԵ. աշխարհ.
Թարգ. Խորէն Վ. Մտեփանէի.

լիբրի մասին պատմում է նաև Փաւստոս Բիւղանդը: Վերջինս խօսելով հայոց Մուշեղ զօրավարի մասին Արշակունեաց Վարապդատ Թազաւորի ժամանակները (384 թ. Ք. ծ. ա.) ի միջի այլոց ասանդում է, որ այդ Թազաւորի դայեակ Բատ Սահառունին շատ նախանձեց Մուշեղի փառքին և իւր անդադրուն բանասարկութիւններով թշնամացրեց յիշեալ Թազաւորին հայ քաջարի սպարապետի դէմ: Վերջապէս Թազաւորը հրամայել էր սպանել Մուշեղին, որ և կատարուել էր արքայական հանդիսաւոր ճաշի ժամանակը: «Սե. եղև իրբև տարան զմարմին սպարապետին Մուշեղի ՚ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընտանիք նորա մահուն նրա, թէպետ և տեսանէին զգլուխ նորուն զատ ՚ի մարմնոյն անտի: Զի ասէին. զորա յանթիւ ճակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ... Իսկ կէսք յաւնելոյ ակն ունէին նմա. մինչև զգլուխն անդէն ՚ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եղին ՚ի տանիսն աշտաւակի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, Ասլէզք իջանեն և յարուցանեն զզաւ Պահապան կային, և ակն ունէին յաւնելոյ մինչև նեխեցաւ մարմինս: Ապա իջուցին յաշտարակէ անտի, և լացին Թաղեցին զնա որպէս օրէն էր»¹⁾:

Մի այլ հայ հեղինակ (V դարու) Եզնիկ Կողբացին իւր «Եղծ աղանդոց» երկի մէջ նոյնպէս խօսում է, որ հայերը հաւատում էին, թէ պատերազմում ընկածների դիակները կարող էին կենդանանալ Յարալէզների օգնութեամբ²⁾:

Վերոյիշեալ բոլոր օրինակներից կարելի է այն եզրակացութեան յանգիլ, որ հին հայերը, հաւատալով մեռեալների յարութեան գաղափարին Յարալէզների օգնութեամբ, միևնոյն ժամանակ այն համոզմունքի պէտքէ լինէին, որ այդ մեռեալներն յարութիւն կարող էին առնել, այսինքն հոգիները կրկին միանալու էին մարմինների հետ, դեռ

1) Փաւստոս Բիւղանդ՝ Պատմ. հայոց—զղրութիւն և, գլ. 12

2) Եզնիկ Կողբացի՝ Եղծ Աղանդոց—գլ. Ա, յօդ. 24—25:

քանի որ թաղուած, հողին յանձնուած չէին. ուրեմն երբ հողինները դեռ ևս մտած չէին ստորերկրեայ կայանը, այլ մնում էին դուրսը, մարմինների շուրջը: Այդ երևում է առաջ բերած փաստերից. Մուշեղ սպարապետին չէին թաղել, յուսալով որ կրկենգանանար. և հողին էին յանձնել այն ժամանակ միայն, երբ դիակը ներուել էր, այսինքն երբ հողին բնաւ չէր մօտեցել մարմնին: Նոյնպէս էր եղել և Արայի դիակի հետ Մովսէս Խորենացու խօսքերին համաձայն:

Թաղուած մեռելների հողինները միշտ սովորութիւն ունին դուրս գալ իրենց կայաններից՝ գերեզմաններից. ընդունելով զանազան ուրուականների կերպարանք: Այստեղից է ծագում ուրուականների հաւատալիքը: Մեռելների հողինները սովորաբար գիշերներն են դուրս գալիս, ուստի այդ ժամանակները վտանգաւոր է անցնել գերեզմանատան մօտով: Հազար ու մի առասպելներ են պտտում ժողովրդի բերանում այդ հաւատալիքների վերաբերմամբ, առասպելներ, որոնք ահ ու սարսափ են ազդում մտտիսպաշտ սրտերի վրայ: Զանգեզուրում ասում են՝ «մի անցիր գիշերով գերեզմանատան միջով, ապա թէ ոչ մեռելները դուրս կրգան իրենց հանգստարաններից և քեզ կը յափշտակեն, կըտանեն իրենց մօտ»: Այդ հողինները կարող են երևալ ոչ միայն իրրև ուրուականներ, այլ և իրրև լոյսի ցոլքեր, բոցեր, կրակներ գերեզմանների վրայ և գիշերային խաւարի մէջ իրենց փայլիլող, խորհրդաւոր կայծերով ահաւոր տպաւորութիւն են թողնում պատահական անցորդի վրայ: Տանկահայոց մէջ շատ է տարածուած այդ տեսակ հաւատք: Եփրադի պարտէզներէն մէկին մէջ անձնասպան մը թաղուած է, թաղուելէն ամիս մը ետքը, անոր հողին վրայ ցոլքեր, կրակի կայծեր կընշմարուին, անշուշտ շրջմովիկ հուրն է սա, որու անհետանալէն ետքը, գերեզման բացուելով, զարուհելի ուրուական մը դուրս կ'ելլէ, ձեռքը մանգաղ ու ոտքին ալ բահ ու բրիչ կապած: Կ'աւանդեն, թէ այս և սոյնօրինակ ճիւղերը հող և ուրիշ տեղեր կընշմա-

բուին, որոնք իրենց շուրջը տնկուած պտղատու ծառերուն վրայ ելլելով ամբողջ պտուղներ կըքաղեն և վերստին գերեզման կրմանեն»¹⁾։

Շատ անգամ մեռելները գերեզմանից զիշերը ելնելով բնդունում են զանազան կենդանիների կերպարանք և մշտնում մարդկանց մէջ։ Այս հաւատալիքի մէջ պէտք է տեսնել մասամբ հոգեյաժողովեան (métempsichose) գաղափարը, այսինքն հոգիների կերպարանափոխուիլը զանազան շնչաւոր և անշունչ առարկաների։ Մեռելների հոգիների այդ կերպարանափոխուած ճիւղները կենդանիների և այլ հրէշների դէմքով կոչւում են ժողովրդի բերանում խորթլախ և գոռնաղաք։ Մարգուանի, որպէս և Տաճկահայաստանի շատ տեղերում հայերը հաւատում են, որ զիշերը մեռելները ռգերեզմաններէն ելլելով՝ այծի, շունի կերպարանքով շրջակաները կըպտտին։ Կ'ըսուի, թէ ասոնք ջուրէն և կամ առջկնին քաշուած գծէն անդին չեն կրնար անցնիլ²⁾։ Նոյնպիսի հաւատք տարածուած է նաեւ Կովկասի հայերի մէջ։

Ժողովրդի կարծիքով խորթլախը են լինում այն բոլոր մեռելները, որոնք թաղուել են առանց պատշաճաւոր ծիսակատարութիւնների։ Հետեալէս հասկանալի է, թէ ինչու հայեր այնպէս խիստ կատարում են այն բոլոր սովորութիւններն ու սնոտիապաշտական ձեւականութիւնները, որոնք դարերով գոյութիւն են ունեցել ժողովրդի կրօնական հաւատալիքների մէջ և որոնք նրա համոզմունքով անպայման անհրաժեշտ են հանգուցեալների հոգիների բարորութեան համար. ապա թէ ոչ, հակառակ դէպքում, ազգականներն հանապազ ենթակայ են լինելու այդ հոգիների չարակամութեանն ու հալածանքներին։

Ինչպէս երևում է խորթլախի և գոռնաղաքի հաւատալիքը գոյութիւն է ունեցել և միջնադարեան հայերի մէջ։ Այդ առթիւ Աւաբէլ Դավրիժեցու պատմութեան մէջ գրա-

¹⁾ Բիւրակն, 1899 թ. № 16.

²⁾ Բիւրակն, 1900 թ. № 28.

նույն ենք մի հետաքրքիր տեղեկութիւն, որն այդ հեղինակը աւանդում է իբրեւ մի իրողութիւն. «Յետ չորից աւուրց ուրանալոյ իւրոյ սատակեցաւ Ղարաչորակն, և յետ չորից աւուրց թաղման իւրոյ յաւուր միում ընդ մերձենալ երեկոյեան տեսին զՂարաչորակն ուրացողն, զի ելլեալ էր ի վհէն, յորում թաղեալն էր, մերկ և խայտառակ և զարչադէմ և այլագունակ, իբրեւ զշուն կատաղի և զպատանն իւր արկեալ 'ի վերայ ուսոց իւրոց դայր ընդ մէջ քաղաքին 'ի շուկայն և 'ի կրպական շրջէր, և որք տեսանէին՝ դահի հարեալ ահաբեկ լինէին, քանզի ամենեքեան ճանաչէին զնա... Եւ ամենայն աւուր ելանէր ընդ մերձենալ երեկոյին և մինչի լուսանալ առաւօտուն շրջէր... և ընդ մերձենալ առաւօտուն զնայր 'ի դիրն իւր մտանէր»:

Մեռեալների հոգիների ելնելը գերեզմանից դիշերը — դա մի ընդհանրացած հաւատալիք է, որ տարածուած է գրեթէ բոլոր ժողովրդների կրօնական մտապատկերների մէջ. էլ չենք խօսում հին յոյների, հռովմէացիների, եգիպտացիների, հնդիկների մասին, որտեղ այդ հաւատքը մի ամբողջ մանրագնին սխտեմի է վերածած, այլ և կովկասաբնակ մանր ազգութիւնների մէջ ծաղկում են այդ տեսակ պաշտամունքներն ամենայն տեղունութեամբ մինչև մեր օրերը:

Նկատի առնելով հոգիների միւս աշխարհում վարած կեանքն ու գոյութեան պատկերը, որի մասին կրթօսենք հետեւեալ գլխներում, ժողովուրդը կարծում է, որ մեռնողների հոգիները անշուշտ մեծ դժուարութեամբ են անջատուում այս կեանքից և դիմում գերեզման: Այս առթիւ հայ ժողովրդի մէջ կան զանազան հաւատալիքներ: Դա այդպէս անուանած հոգնդարձի հաւատքն է, որով կարելի է երկարացնել մեռնողի կեանքը, թոյլ չտալով, որ հոգին շուտով բաժանուի մարմնից: «Բորչալիում, ոչ թէ թեթեւացնում են հոգեվարքը, այլ և հոգեդարձ են անում. սաստիկ լացով խանգարում են հրեշտակին հոգին առնելու: Այսպիսի դէպքերում հիւանդն ապրում է դարձեալ մէկ

կամ ութ օր, սահաիկ տանջուելով: Այդ ժամանակ միայն նկատելով, որ հոգեդարձ է եղել, հիւանդին բոլորովին առանձնացնում են և հանդիստ թողնում, որ հոգին աւանդէ: Որպէսզի հիւանդը ոչ դժուարութեամբ բաժանուի այս կեանքից և կարօտով չմնայ այս աշխարհից, ջանում են մի կերպ թեթեւացնելու նրա հոգեվարքը: «Այդ նպատակով, եթէ հիւանդը երկրագործ է՝ խոփը, եթէ դարբին է՝ մուրճն ու սայլը, եթէ հիւանդ՝ ուրազը դնում են կոծքին: Եթէ հիւանդի սիրելիներից մէկը ներկայ չէ և սա տանջում է նրա կարօտով, վերջինիս շորերը, գաւազանը, նամակը դնում են հիւանդի կրծքին՝ որ հանգստանայ և հոգին աւանդէ»¹⁾: Բուլանըխում «հոգեվարքի ժամանակ ընտանիքի լացն ու կոծը աւելի կրսաստկանայ, բայց որքան կարելի է, պէտք է այնպէս լան, որ հիւանդը հոգեդարձ չըլինի, այսինքն թէ հոգին կ'ուզէր երթալ, բայց ընտանիքի լացն ու կոծի պատճառով նորից կըդառնայ մարմնոյ մէջ. երբեմն էլ Աստուած, գթալով ողորմելի ընտանիքին 3 օր ժամանակ կըտայ հիւանդին, որ երթացողից կարօտով չմնան: Հոգեդարձը որ շատ երկարի, աշխատում են թեթեւացնել հոգեվարքը. այդ նպատակով եթէ հիւանդն իւր կենդանութեան ժամանակ որեւէ սովորութիւն ունէր ուտելու, խմելու կամ մօլութիւն, վէգ կըդնեն սրտի վրայ»²⁾:

Նոյն իսկ երբ արդէն մի մեռած դիակ է մնացել, ժողովուրդի համոզմունքով, կարելի է միշտ նկատել, թէ հոգին չէր ուզում նեղանալ այս աշխարհից: Բոլոր հայ գաւառներում սովորութիւն ունեն, երբ հիւանդը վերջնականապէս փրչում է հոգին, դիտելու մեռելին, եթէ աչքը բաց է մնացել, իսկոյն մի քիչ հոգ են ածում վրան, տըրում և փակում, հաւատալով, որ նա աշխարհից դեռ կշտացած չի եղել և միայն հոգով կարող է կշտանալ. և եթէ բերանը

1) Ե. Լալայեան՝ Բորչալուի գաւառ՝ Ազգ. Հանդ. X գ. 1903.

2) Բենսէ՝ Բուլանըխ—Ազգ. Հանդ. Ե. գիրք, 1899 թ.

բայ է մնացել, փակում են բերանը¹⁾։ Շատ անգամ նաև թաղում, հողին յանձնուած մեռեալներն էլ դէպի աշխարհն են նայում և չեն կշտացած նախկին կեանքից։ Բուլանքիում, որպէս և բազմաթիւ հայաբնակ գիւղերում, մեռելի թաղելուց մի քանի օր յետոյ գերեզմանի հողի փուլը կրդիտեն, եթէ փոսացած լինի, կասեն, աչքն 'ի դուռնն (աշխարհն էր)²⁾։ Վարանդայում, թեթէ մի ննջեցեալից յետոյ տնեցիներից հիւանդանում են, կարծում են, թէ ննջեցեալն իսկապէս մեռած չէ և տնեցիներից եօթը հողի տանելու է։ Որոշելու համար, թէ ննջեցեալն իսկապէս մեռած է թէ ոչ, գերեզմանի վրայ դարի են ածում և ձին տանում մօտը. եթէ կերաւ, այդ ապացոյց է, որ ննջեցեալն իսկապէս մեռած չէ։ Այս դէպքում բայ են անում գերեզմանը, ննջեցեալի գլուխը ջախջախում, կամ մի մեխ խփում գլխին, մէկն էլ սրտին³⁾։

Քանի որ հողին դժուարութեամբ է բաժանւում այս կեանքից, հետևաբար նա ձգտելու է ամենայն կերպ հնարաւորութիւն ունենալ, որպէսզի վերադառնայ տնեցոց մօտ։ Իսկ այս վերադարձի զաղափարը լցնում էր նախնական մարդու կրօնական մտապատկերները միմիայն ահ ու դողով։ Քանի որ նախնական մարդը տակաւին հոգեպաշտութիւն էր դաւանում առանց իմանալու այն պաշտամունքները, որոնցով կարելի էր հայցել վերին ոյժերի, խորհրդաւոր ոգիների գութն ու բարութիւնը, նա երեւակայում էր այդ հոգիներին, միայն իբրև ահաւոր, փեսաբեր արարածներ։ Ուստի հոգեպաշտ մարդը դիմում էր զանազան միջոցների, որոնց օգնութեամբ հնարաւոր էր նրա կարծիքով թոյլ չտալ որ մեռեալների հոգիները, քանի որ դիակները չէին թաղուած, վերադառնան ճանապարհից դէպի տուն։ Այդ հաւատալիքները մնացորդները

1) Ե. Լալայեան՝ Բարչալուի գաւառ—Ազգագր. Հանգէս, 1903 թ. X գիրք. նոյն՝ Սիսիան—եր. 141, նոյն՝ Գանձակի գաւառ—եր. 93, նոյն—Ջաւախք, եր. 195.

2) Բենաէ՝ Բուլանքի, 1899 թ. գիրք Ե.

3) Ե. Լալայեան՝ Վարանդա, եր. 184.

դաժնում ենք հայկական մի շարք սնապաշտութիւնների մէջ: Գերմանացիների մէջ սովորութիւն կայ, եթէ մէկը վախճանում է, իսկոյն և եթ ըաց են անում սենեակի բոլոր պատուհանները, որպէսզի հոգին դուրս գնայ սենեակից: Ահա այսպիսի սովորութիւն գոյութիւն ունի նաև հայերի մէջ: Գանձակի գաւառում, երբ սկսում է հոգեւորքը, ըաց են անում պատուհանները նոյն այդ դիտաւորութեամբ¹⁾: Հայերը հաւատում են, թէ երբ ցանկալի է, որ մէկը իւր գնացած ճանապարհից յետ չդառնայ, նորա մէկնած ժամանակը յետևից մի կուժ կամ որևէ կաւէ աման են կոտրում, ասելով՝ «գնալդ լինի, գալդ չըլլինի»: Այս նպատակով էլ, երբ մեռելը դազադով դուրս են հանում և ուղևորում դէպ եկեղեցի կամ հանգստարան, անեցիկներից մէկն անյապաղ դռան շէմքի վրայ կոտրում է կաւէ մի աման, որպէսզի հոգին տուն չվերադառնայ: Յիշեալ սովորութիւնը տարածուած է նաև Թիֆլիզի հասարակ ժողովրդի մէջ:

Գրենյանդիայում, ինչպէս և հարաւային Աֆրիկայի մի քանի ցեղերի մէջ, թագաւորում է նոյն նպատակով մի հաւատալիք, թէ հարկաւոր է մեռեալի հոգուն խաբել, որպէսզի սա վերադարձի ճանապարհը չդաժնի: Այդ առթիւ յիշեալ վայրենիքները հանգուցեալին դուրս են հանում տանից ոչ թէ դռնից, այլ պատուհանից, կամ պատի մէջ մի ծակ են ըաց անում և սրա միջից դուրս հանում դիակը և ապա պատուհանը փակում կամ պատի ծակը կրկին ծեփում: այնպէս որ մեռեալի հոգին, այդ անցքերը փակ դաժնելով, չի իմանայ, թէ որտեղից են իրեն դուրս բերել: Այս տեսակ հաւատալիք կարելի է դաժնել և կովկասաբնակ օսերի մէջ: Հոմանիշ նշանակութիւն ունի և հետևեալ սովորութիւնը Բորչալուի հայերի մէջ: Դիակը սենեակից դուրս հանելիս, դազադը երեք անգամ խփում են դռանը և յետ տանում: Երևի այստեղ մարդկային միտքը մի խորաման-

1) Ե. Լալայեան՝ Գանձակի գաւառ, եր. 93.

կութիւն է գործադրում, որպէսզի այդ երեք զարկերով մեռեալի հոգին մոռանայ, չիմանայ, թէ ինչ տեղով նորան դուրս բերին¹⁾։

III.

Նախորդ տողերում գիտողութեան առանք հայ ժողովրդի մէջ տիրապետող հաւատալիքները հոգու և մահուան վերաբերմամբ։ Սակայն գորանով լուկ չեն վերջանում այդ հաւատալիքները։ Ինչպէս արդէն վերը նկատել ենք, մեռածները, հանգիստ առնելով գերեզմանների մէջ, սկսում են նոր կեանք. նրանց հոգիները շարունակում են ապրել միւս աշխարհում, ստորերկրեայ կայանում, որտեղից նոքա միշտ կամ դուրս են գալիս կամ իրենց մասին յիշեցնել տալիս կենդանի մնացածներին, այս աշխարհում ապրողներին։ Այստեղից առաջանում են որոշ յարաբերութիւններ, շփման որոշ կապեր մեռեալների հոգիների և կենդանի մնացածների միջև։ Եւ ճիշտ, կենդանի մնացածներից որոնց հետ են հոգիները պահպանելու իրենց յարաբերութեան կապերը, եթէ ոչ իրենց ամենամօտիկ կենդանի մնացած բարեկամների, ազգականների, վերջապէս այն ընտանիքի հետ, որին երբեմն իրենք պատկանում էին։ Այդ յարաբերութեան կապերն անհրաժեշտ են պահպանելու, որովհետեւ հոգիները միւս աշխարհում նոյն պէտքերն ու կարիքներն ունեն, ինչ որ մի ժամանակ այս աշխարհում. նոքա ստորերկրեայ կեանքում ապրում են նոյն զգացմունքներով, նոյն մտքերով, նոյն տանջանքներով և նոյն ուրախութիւններով, որոնցով զգացել ու մտածել էին այս կեանքում։ Այսպէս էին հաւատում մարդիկ նախնական ժամանակներում, արևոր հնութեան մէջ. այսպէս են հաւատում նաև այժմս, մեր օրերում, շատ ժողովուրդներ, որոնք տակաւին կանգնած են կուլտուրական ստոր

¹⁾ Ե. Լալայեան՝ Բորչալուի գաւառ—Ազգագր. հանդէս՝ 1903 թ. գիրք X.

աստիճանների վրայ. այսպէս է վերջապէս հաւատում շատ հայարնակ գաւառներում մեր ժողովուրդը:

Ակներեւ է, որ մեռեալների հոգիներէ և ողջերի միջև գոյութիւն ունեցող կապերի մասին տիրող այդ հաւատքը պէտք էր ծագեցնէր մի նոր զգացմունք, այն է՝ ամենայն միջոցներ ձեռք առնել բաւարարութիւն տալու հոգիների պահանջներին, գոհացում տալու նոցա կարիքներին: Հակառակ դէպքում հոգիները կարող են թշնամանալ իրենց ազգականների դէմ և հանապազ շարիքներ ու ձախորդութիւններ պատճառել վերջիններին: Ձուր չէ՞ մեր ժողովուրդն ասում՝ «մեռելներն ալ չեն մոռնար ըրենց էգամ բարիքը»: Ուստի վերոյիշեալ զգացմունքը վերածւում է մի սրբազան պարտականութեան, մի կրօնական արարողութեան, որ անհրաժեշտ է կենդանի մնացածների երջանկութեան համար: Դա մեռեալների պաշտամունքը, կուլտն է, որ այնպիսի խորն ակոսներ է՝ փորել հայ ժողովրդի կրօնական մտապատկերների մէջ:

Դաւանելով մեռեալների յարաբերութեան կապերի վերաբերմամբ այս տեսակ հայեացք, հայ ընտանիքն անշուշտ պէտք է անջնջելի յիշատակ պահի իւր հանգուցեալների մասին, երբէք մոռացութեան չտայ նրանց հոգիներին: Այդ առթիւ բոլոր հայ գաւառներում սովորութիւն ունեն՝ դիակը վերցնելիս թաղել տանելու համար, նրա տեղը դնում են մի քար կամ գարի շող տալիս, որպէսզի հանգուցեալի յիշատակն այդ տան մէջ հաստատ մնայ: Բուլանըխում մեռելի թաղման միւս օրը երեկոյեան դէմ բարեկամներն ու դրացի կանայք կրհաւարուեն հանգուցեալի տանը և կ'սկսեն մեռնողի մասին խօսալ, յիշատակել և ապա այնտեղ, ուր ննջեցեալը հոգին աւանդեց՝ սեղան կըրտուի և վրան թուով 7 ճրագներ կըշարեն. այդ լուսաւորութիւնը, որով ուզում են արտայայտել յիշատակելու գաղափարը, կոչւում է մեռելի հոգու ծրագ¹⁾: Նոյնպէս և Բորչալիում մեռելի թաղման օրից սկսած 7 գիշեր

1) Բենսէ՝ Բուլանըխ,—Ազգագրական Հանդէս, 1899 զիբր Ե.

շարունակ ձեթի կրակ են վառում¹⁾։ Գանձակի գաւառում, Սիսիանում, ինչպէս և մի քանի այլ տեղերում թաղման օրից սկսած 8 երեկոյ շարունակ ննջեցեալի տանը, դիակը լողացրած տեղում, ճրագ են վառում²⁾։

Մեռելները հողիները այդ յարաբերութիւնների կապը պահպանում են իրենց կողմից նորանով, որ ժամանակ առ ժամանակ գալիս են իրենց ընտանիքին այցելութեան։ Զաւախքում, ինչպէս և Թիֆլիզում կամ այլ ուր, ժողովուրդն հաւատացած է, որ մեռեալների հողիներն իրենց կայաններից շաբաթ երեկոները գալիս են տնեցիներին այցելութեան. ուստի այդ երեկոները ճրագը մինչև լոյս վառ են թողնում, կամ եկեղեցական մօմ վառում, խուսկ ծխում³⁾։

Հանգուցեալի դիակը լուանալիս սովորաբար ասում են ոտանաւորի ձևով իրենց բարեմաղթութիւնները հանգուցեալի հասցէին. և այդ արտասանած խօսքերի մէջ կան բառեր, որոնցով ցանկութիւն են յայտնում, որ հանգուցեալի յիշատակը մնայուն լինի.

Գնալի ճանապարհդ բարի ընի,

Աղօթքդ տան վրայ ընի,

Մնացածները բարի ընեն,

Դուն էլ բարի մեռել ընիս,

Զմիռանան քէ⁴⁾։

Հանգուցեալների յիշատակը հաստատ պահելու այդ զաղափարը հեթանոսական կրօնից իւրացրել է և քրիստոնէութիւնը։ Վերջինս չէր կարող իւր դաւանանքի մէջ չընդունել այն սկզբունքները, որոնք զարեւոյ ծագկել ու գոյութիւն էին ունեցել գրեթէ բոլոր ժողովրդների կրօնական փիլիսոփայութեանց մէջ։ Դա «մեռելոց յիշատակի»

1) Ե. Լալայեան՝ Բորչալուի գաւառ—Ազգագրական Հանդէս, 1903 թ. գիրք X.

2) Նոյն՝ Գանձակի գաւառ, եր. 99.

3) Նոյն՝ Զաւախք, եր. 206.

4) Նոյն՝ Գանձակի գաւառ, եր. 94. նաև նոյն՝ Բորչալուի գաւառ—Ազգագր. հանդէս, 1903 թ. գիրք X.

տանն է, մի օր, երբ բոլոր քրիստոնեաները պէտք են նուիրեն երբեմն իրենց ընտանիքին պատկանող մեռած անդամները յիշատակը յարգելուն: Հայոց եկեղեցական սովորութիւններն այդ կողմից աւելի հեռուն են դնացել և հաստատել են մի շարք ծիսակատարութիւններ ու օրեր մեռեալները յիշատակել համար: Այդ նպատակին են ծառայում «այգը», եօթնից յիշատակը, քառասունըր, տարուայ միջին հինգ սահմանեալ մեռելոցներ, Վարանդայում ժողովուրդը հաւատում է, որ մեռելների հոգիները նաւակաթիւներ, մեռելոց օրերին իջնում են իրենց գերեզմանների վրայ և սպասում, որ իրենց ազգականները զան, գերեզմաններն օրհնել տան: Աւ եթէ օրհնել են տալիս, իրենք ուրախացած օրհնում են օրհնել տուողներին, իսկ եթէ չեն օրհնել տալիս՝ տխուր տրտում հեռանում են, անիծելով ազգականներին¹⁾: Վերջապէս մեռելներին շատ տեղերում յիշում են նաև Աւագ ուրբաթ օրը. այս սովորութիւնն այժմ էլ ընդհանրացած է Արևմտեան Եւրոպայի քրիստոնեայ հասարակութիւնների մէջ:

Քանի որ հանգուցեալների յիշատակն այսպիսի մի մեծ նշանակութիւն ունի ընտանիքի համար և, նախամեծար տեղ բռնելով մեռեալների պաշտամունքի մէջ, անհրաժեշտ պայման է համարւում հոգիների հանգստութեան համար, ուստի ժողովուրդը համոզուած է, որ մեռեալների հոգիներն ամենայն կերպ շահագրգռուած են վառ պահելու այդ յիշատակն իրենց վերաբերմամբ: Այս մասին հայ հաւատալիքների մէջ գոյութիւն ունի մի անտիապաշտութիւն, թէ մեռելներն իրենց տանից, ընտանիքից տանում են իրենց հետ որևէ բան, որը կենդանի մնացած տնեցոյր հանապաղ կըյիշեցնէ հեռացած հոգիների մասին: Մի բան տանելով՝ հանգուցեալները պէտք է կամ մի փնաս կամ մի բարիք հասցրած լինեն ընտանիքի անդամներին՝ մի խօսքով զգալ, մտածել տան նրանց, որ իրենք՝ հոգիները՝ տակաւին ապրում են և թէ իրենց մոռանալ չի կարելի:

¹⁾ Ե. Լալայեան՝ Վարանդա, Կր. 185.

Ահա այդ նպատակով մեռեալների հոգիները գնալով գերեզման, կարող են իրենց հետ տանել ընտանիքից իրենց սիրելիներից մէկին: Եւ ժողովուրդը միշտ աշխատում է մինչև անգամ գուշակել, թէ արդեօք մեռելն իւր հետ կըտանի՞ մի այլ ուրիշին. ուստի կարծում են, որ եթէ մեռելի մարմինը կակուղ լինի, յետևից մի նոր մեռել է տանելու: Բարեբաղի հայերը այդ վտանգից ազատուելու համար հաւատում են, որ զննջեցեալը տնէն դուրս հանած ատեն, ետէն ջուր նետել հարկաւոր է, որպէսզի ուրիշ մահ չպատահէ՝¹⁾ Գրեթէ բոլոր հայ գիւղերում մեռեալի պատանքից աւելացած կտորը տան սիւնին կն փաթաթում՝ ապա թէ ոչ մեռեալի հոգին բարկանալով, որ իրեն պատկանելիք լաթը գործածում են տանեցիք, կարող է տանից մի նոր մեռել տանել իւր հետ: Մեռելը շատ անգամ, երբ նրան գերեզման են տանում, յուղարկաւորութեան միջոցին «կոխ» է տալիս ճանապարհին պատահած մարդկանց, մանաւանդ երեխաներին: Ուստի յուղարկաւորութեան միջոցին բոլոր տներում անհրաժեշտ պէտք է ոտքի կանգնեն, մանաւանդ ծննդկան կանայք ու երեխայք. նոյն իսկ ծծկեր մանուկներին «կոխից» ազատ պահելու համար մեռել անցկացնելու միջոցին օրօրոցի հետ զլխի վեր են կանգնացնում:

Հոմանիշ նշանակութիւն են ներկայացնում և հետեւեալ մի քանի նախապաշարումները, որոնք այնքան մեծ առնչութիւն ունեն մեռեալների յիշատակը մնայուն պահելու գաղափարի հետ: ԵՆՐԸ մէկը մեռնի, տան մէջ բոլոր ջրերը կըթափեն, որովհետեւ մեռելն իւր ձեռքը մէջը թաթախած կըլլայ՝²⁾ Կէտիկի զաւառում «տունէն ջեռը (աւելուածը) մեռելին ետէն կընետեն, որպէսզի ցաւ, շուռ հետը տանի»³⁾: Մարդուանի հայերը հաւատում են՝ որ երբ ընտանիքից մէկը վախճանուի, պէտք է տան միւս

¹⁾ Բիւրակ, 1899 թ.

²⁾ Բիւրակ, 1900 թ.

³⁾ Անդ.

անդամների հասակի երկայնութեամբ մասնած թել չափեն ու մեռնողի պատանքի մէջ դնեն, որպէսզի հիւանդութիւնները նրա հետ հողին յանձնուին¹⁾։ Նոյն գաւառում «մեռելը թաղելէ ժամանակ մը յետոյ, երբ տան անդամներէն մէկն հիւանդանայ, շապիկը մեռնողի գերեզմանի վրայ կրթթովուեն, հիւանդութիւնը հոն կրթափութի, կ'անհետանայ»²⁾։

Նախորդ և այս դիտում արած նկատողութիւններից կարող ենք եզրակացնել, որ նախնի մարդու, ինչպէս և կուլտուրապէս ստոր կանգնած այժմեան ժողովրդների, կրօնական փիլիսոփայութիւնն ամբողջապէս տողորուած էր մատերիալիստական հայեացքներով։ Կրօնական այդ մատերիալիզմն ըմբռնւում էր իւր ամենակոպիտ մտապատկերներով, որոնք կայանում էին նրանում, որ մեռեալներն հանդերձեալ կեանքում շարունակում էին նոյն կենսական պահանջներն ու կարիքները զգալ, ինչպէս որ իրենց կենդանի ժամանակը։ Մեզ շատ հետուն կրտանէր ծանօթանալու և համեմատելու այդ տեսակ կրօնական հայեացքների գոյութիւնն հին հռոմէացիների, յոյների, հնդկացիների, ինչպէս և ժամանակակից բազմաթիւ վայրերի ցեղերի ու կովկասեան լեռնականների մէջ։ Բաւականանա՞նք միայն տեսութեան առնելու հայերի հաւատալիքների մէջ ընդհանրացած մատերիալիստական հայեացքները հողիների անդրերկրեայ կեանքի վերաբերմամբ, հանդերձեալ կեանքի, որ միանգամայն նմանում է իրըր այս աշխարհիս կեանքին։

Ահա այսպիսի հայեացքների ազդեցութեան տակ հայ ռամիկը առանձնապէս հոգս է քաշում մեռեալի հետ միասին թաղել այն ամենն, ինչ որ նրան անհրաժեշտ է եղել այս կեանքում։ Բորչալիում ճղազաղի մէջ դնում են, եթէ ննջեցեալը զարբին է եղել՝ մուրճ, եթէ հիւան՝ ուրազ, եթէ սափրիչ՝ ամեկի, մի խօսքով նրա պարապմունքներին

¹⁾ «Բերակ», 1900.

²⁾ Անդ.

վերաբերեալ մի գործիք¹⁾։ Նոյն մտքով պէտք է բացատրել և այն երևոյթը, որ շատ տեղերում մեռելներին թաղում են ամենալաւ շորերի, թանգագին իրերի հետ՝ ապարանջաններ, օղեր, զէնքեր և այլն։ Հայկական դաւաններում հնախուղական նպատակով կատարած մի քանի պեղումների ժամանակ հին գերեզմաններից հանել են այդպիսի իրեր։ սակայն 'ի հարկէ շատ մեծ համարձակութիւն կրկնէր մեր կողմից պնդել, որ այդ գերեզմանները հայկական ծագումի են, մինչև որ հնագէտները չ'ապացուցեն այդ։ Բայց և այնպէս՝ նկատի առնելով համեմատական փաստերն ուրիշ ազգութիւնների վերաբերմամբ, մենք կարող ենք առ այժմս բաւականանալ միմիայն ենթադրութիւններով, որ հայերն էլ հին ժամանակները իրենց հանգուցեալներին գերեզման իջեցնելիս թաղում էին նոյնպիսի իրեր, որպիսիք գտնուած են վերոյիշեալ պեղումներից։

Ժողովուրդը այն կարծիքի է, որ եթէ չհոգայ այդ մասին, միևնոյն է՝ մեռեալներն իրենք արդէն իրենց հետ կըտանեն, ինչ որ ցանկանան։ Բուլանըխում հայերը հաւատում են, որ ռմեռնոյն իւր բաժին (ժառանգութիւն) տաւար, ոչխար և այլն կըտանէ իւր հետ (կըստտակնն)²⁾։ Ուստի ժողովուրդը մտածում է, որ աւելի լաւ է մեռելների վրէժխնդրութիւնից ու բարկութիւնից ազատ մնալու համար, հոգս քաշել այն բոլորի մասին, ինչ որ հոգիներին հարկաւոր է հանդերձեալ կենանքում։ Այդ հոգսը կենդանի մնացածների կողմից այնպիսի մեծ ծաւալ է ստանում, որ նոքա աշխատում էին մեռեալներին նոյնիսկ չգրկել իրենց կանանցից ու ծառաներից։ Սրանով պէտք է բացատրել այն սովորութիւնը, որ գոյութիւն ունէր Հնդկաստանում մինչև XIX դարու առաջին կիսամեակը՝ այն է այրի մնացած կանանց այրումն իրենց մեռած ամուսինների գերեզմանների վրայ հրաբորբոք խարոյկների մէջ։ Կրակն,

¹⁾ Ե. Լալայեան՝ Բորչալուի գաւառ—Ազգագրական Հանդէս, 1903 զիբը X.

²⁾ Բենսէ՝ Բուլանըխ—Ազգագրական Հանդէս, 1899, զիբը Ե,

այս գէպերում ոչնչացնելով կնոջ մարմինը, տանում էր նրա հողին ամուսնու գիրկը: Ի հարկէ այս սովորութեան դործածութեան մասին մեզ ժամանակակից հայերի մէջ խօսք անգամ չի կարող լինել: Սակայն մի քանի հին սովորութիւնների մնացորդները և մեր պատմագիրների աւանդած դիւցաբանական գրոյցները մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ հին հայոց մէջ էլ գոյութիւն է ունեցել այրի կանանց և մասամբ ծառաների այրումը մեռեալների գերեզմանների վրայ:

Մովսէս Խորենացին հիմնուելով ժողովրդական աւանդութիւնների վրայ, այսպէս է պատմում Արտաշէս մեծի մահը: «Պատմիչը գրում է, թէ ճրչափ մարդիկ մեռան Արտաշէսի մահի ժամանակ. սիրելի կանայք, հարճեր և մտերիմ ծառաներ»¹⁾ Արտաշէսի որդին՝ Արտաւազդը թագաւորելով իւր հօր տեղը, շարունակում է Մովսէս Խորենացին, գայրացել էր այդքան մարդկային զոհերի առթիւ. «սորա մասին (Արտաւազդի) Գողթնի երգիչներն այսպէս են առասպելաբանում, թէ Արտաշէսի մահի ժամանակ շատ կոտորած եղաւ հեթանոսական սովորութեան համաձայն: Նեղացաւ, ասում են, Արտաւազդը և ասաց՝ դու գնացիր և բոլոր երկիրը քեզ հետ տարար, ես այս աւերակների վրայ լինչպէս թագաւորեմ»²⁾: Եթէ Մովսէս Խորենացու աւանդած այդ տեղեկութիւնները գերեզմանների վրայ կատարուող սպանութիւնների մասին վերցրած են լեգենդար ու առասպելական աղբիւրներից, այնուամենայնիւ նրանց մէջ պէտք է որոշ իրողութիւն որոնել: Ժողովրդական բանահիւսութիւնն որքան էլ գերբնական ու առասպելայօգ նիւթեր է արծարծում, բայց և այնպէս՝ միշտ պարունակում է իւր մէջ այնպիսի հայեացքներ, կենսական այնպիսի մտապատկերներ, որոնք հանապազ արտացոլացնում են նրա մտաւոր—բարոյական միջոլորդը, յի-

¹⁾ Մովսէս Խորենացու պատմութիւն՝ Բ գիրք, Կ գլ. աշխարհ. թարգմ. Խորէն ծայրագ. վրդ. Ստեփանէի:

²⁾ Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը գիրք Բ. գլ. ԿԱ.

շեցնել տալիս նրա կենցաղի պատմական ու արդի ձևերի փոխադրություններն են յիրաւի, մենք գտնում ենք այլ պատմական փաստեր, որոնք ապացուցանում են, որ ժողովրդական բանահիւսութեան մէջ յիշատակած սովորութիւններն՝ մեռեալների գերեզմանների վրայ կատարուող սպանութիւնները իրօք գոյութիւն է ունեցել նախնի հայերի մէջ, Նոյն Մովսէս Խորենացին, խօսելով Ներսէս Մեծի գործերի և մուծած բարեկարգութիւնների մասին, պատմում է. «Եւ նախարարների ազգերից վերցրեց այս երկու բանը — մերձաւորների խնամութիւնը... և միւսը, որ մնաւորների վրայ սպանութիւններ էին անում՝ հեթանոսական սովորութեամբ»¹⁾։

Ժամանակի ընթացքում այս սովորութիւնն անշուշտ խաղառ չբացել էր. սակայն նրա ծիսակատարութիւնը, միանգամայն վերափոխուելով, ընդունել էր մի նոր ձև, որի մէջ պարփակոււմ էր նոյն մտածողութեան ընթացքը, նոյն կրօնական մտապատկերը։ Դա՛ այլի կնոջ մազերի (ծամեր) կտրելն է և թաղելը ամուսնու դիակի հետ, նմանապէս իւր մարմնի մասերը, մանաւանդ երեսը, կտրտել։ Թէ որքան տարածուած էր հայ սովորութեան իրաւունքի մէջ վերոյիշեալ ծէսը, դա երևում է այն խիստ որոշումից, որ կայացրել է Վաղարշապատի եկեղեցական ժողովը 325 թ. «Որ կոծ դնեն և գնեցնեն խզեն և զնակատս հարկանեն, նզովեալ լիցին 'ի կեանս և 'ի մահ»²⁾։ Նոյն այդ սովորութեան մասին յիշատակում է նաև Փաւստոս Բիւզանդը. «Ապա յետ մահուան Ներսիսի յորժամ գմբեալսն լային, փողովք և փանդոք և քնօք զկոծսն պարուցն կաքաւելով, զտիզսն հատնալս, զերեսս պատտոնալս, արք և կանայք պղծութեամբ ճիւղութեամբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով և կամ ափս հարկանելով, գմբեալսն յուղարկէին»³⁾։

¹⁾ Մովսէս Խորենացու պատմութիւն գիրք Գ, գլ. Ի.

²⁾ Արէլ արքեպ. Մխիթարեան՝ Պատմութիւն ժողովոց Հայաստան. եկեղեցւոյ, եր. 21.

³⁾ Փաւստոս Բիւզանդ, պարութիւն Ե, գլ. ԼԱ.

Վերայիշեալ այդ խիստ արգելումները ազդեցութեամբ պէտք է բացատրել և այն հետաքրքրական սովորութիւնը, որ դարմանալի պահպանողութեամբ ընդհանրացած է մեզ ժամանակակից հայերի մէջ ամենուրեք. դա այն է, որ կանայք մեռեալի յուղարկաւորութեանը մասնակցում են մինչև եկեղեցի, իսկ եկեղեցուց արդէն տուն են վերադառնում. այնպէս որ սգուոր կանանցից բնաւ ոչ որչի համարձակում զնալ գերեզմանատուն և հանդիսատես լինել թաղման: Աներկրայ է, որ կամենալով իսպառ արմատախիլ անել ժողովրդի մտածողութիւնից ոչ միայն կանանց սպանումը հանգուցեալի գերեզմանի վրայ, այլ և այդ գաղափարի իրական մնացորդները՝ ծամեր և երես կտրելը, քրիստոնէական վարդապետութեան ազդեցութեան ներքոյ ներմուծուել է սովորութեական իրաւունքի մէջ մի հակառակ հասկացողութիւն՝ միանգամայն արգելել կանանց մասնակցելու թաղման յուղարկաւորութեանը:

Այնուամենայնիւ արդի հայերի թաղման սովորութիւնների մէջ նկատում ենք մի քանի մնացորդներ, որոնք իրենց վրայ կրում են նախկին ժամանակների մեռելների գերեզմանների վրայ գոյութիւն ունեցող այրման կամ սպանման հետքերը: Բորչալիում և Գանձակի գաւառում թաղման հենց նոյն երեկոյին հանգուցեալի գերեզմանի վրայ կրակ են վառում¹⁾: Այս սովորութեան մէջ, ինչպէս տեսնում ենք, ժողովուրդը պահպանել է միայն կրակ վառելու ծէսը, որ մի ժամանակ ծառայելիս է եղել հանգուցեալի կնոջ կամ ծառաներին այրելու համար. իսկ այդ կրակի նշանակութեան գաղափարը անյայտ է ժողովրդին, որը միամտորէն այլ բացատրութիւններ է տալիս:

Թաղման ծիսակատարութիւնների մէջ յայտնի է իբրև մի տարածուած սովորութիւն հանգուցեալի ձիու մորթելը նրա գերեզմանի վրայ: Այստեղ արտացոլանում է ժողովրդի նոյն մատերիալիստական հայեացքը հանդերձալ

¹⁾ Ե. Լալայեան՝ Գանձակի գաւառ եր. 28, նոյն՝ Բորչալուի գաւառ—Ազգագրական Հանդէս, 1903 թ. X գիրք եր. 176.

կեանքի վերաբերմամբ՝ չգրկել հանգուցեալի հոգուն իւր սիրելի նժոյգից, որը իրեն ծառայել էր կենդանի ժամանակը: Յիշեալ սովորութիւնը գոյութիւն ունի գրեթէ բոլոր արեւելեան ժողովրդներէ մէջ, թէև այժմս միանգամայն վերափոխուած ձևերով պահպանուել է միայն այդ ծիսի մի մասը — ձիու մասնակցութիւնը թաղման յուղարկաւորութեանը մինչև գերեզման¹⁾: Տաճկաստանի հայերի մէջ, ինչպէս երևում է, այդ սովորութիւնը բաւականին ընդհանրացած է: Բուլանըխում տեթէ մեռնողն անդրանիկ մէկն է կամ հարստի միակ զաւակը, նորա ձին զարդարած ու զուգած, մեռնողի ընտիր հագուստներն ու զարդարանքները, գէնքերը և զլիսու քօյօզը իւր հարուստ փաթոյթներով ձիու վրայ դրած առջևից կրքաշեն²⁾: Նաև Սասունի ու Տիգրանակերտի գաւառներում, եթէ ննջեցեալն անդրանիկ զաւակ է, յուղարկաւորութեան հանդիսի համար մի ձի են զարդարում, մեռնողի հագուստը, նրա սուրը, վահանը, հրացանը ձիու վրայ են քաշ ձգում³⁾:

Կենսունակութեան, կեանքի յարատեւութեան անհրաժեշտ պայմանը սնունդն է, կերակուրը: Նկատի առնելով հոգիների հանդերձեալ կեանքում վառած կենցաղի վերաբերմամբ տիրապետող այն մատերիալիստական հայեացքները, որ կազմել է ժողովրդի կրօնական փիլիսոփայութիւնը, բնականաբար սպասելի է, որ հոգիներն էլ իրենց գոյութիւնը պահպանելու համար միշտ սննդի պահանջ են զգում: Եւ յիշուի, որպէսզի մեռեալների հոգիները քաղցից չտանջուեն, նրանց կերակուր մատակարարելու հոգսը պարտաւորուած են իրենց վրայ վերցնելու հանգուցեալի ընտանիքի սգաւոր անդամները: Տաճկահայաստանի շատ գաւառներում, որպէս և Կովկասի հայերիս մէջ՝ Վարանդայում, Գանձակում, Բորչալիում մեռեալի կրծքի կամ

¹⁾ М. Ковалевский — Древний законъ и современный обычай, т. I, стр. 85—86.

²⁾ Բենեէ՝ Բուլանըխ — Ազգագրական Հանդէս, 1899 թ. գիրք Ե.

³⁾ Գ. վարդ. Սրուանձառանց — Մանանայ:

դադադրի վրայ մի հաց են դնում: Հանգուցեալին հողին յանձնելուց յետոյ կրկին շարունակում են այդ հոգսերը: Վարանդայում թաղման միւս օրը սգաւորները գնում են «այգ» կատարելու: այնտեղ են հաւաքւում ննջեցեալների ազգականները ու բարեկամները, մանաւանդ կանայք, բերելով իրենց հետ օղի, գինի և խմորեղէն: Գերեզմանն օրհնելուց և բաւականին սուգ անելուց յետոյ մի կին ջուր է ածում՝ գերեզմանի վրայ: յետոյ բոլորը թէ տղամարդ և թէ կին մի մի բաժակ օղի են խմում երկար բարեմադթութիւններով, ուտում բերած խմորեղէնները և ապա թողնելով մնացորդները գերեզմանի մօտ, իբրև մեռեալի «փայ», վերադառնում սգաւորի տունը ճաշելու¹⁾: Հոմանիշ սովորութիւն տեղի է ունենում Գանձակի գաւառում ևլ. սուգ ու լացից յետոյ նախ տղամարդիք և ապա կանայք ողորմաթաս են խմում, նախապէս մի քիչ օղի լցնելով գերեզմանի վրայ և վերադառնում տուն, ուր և հաց են ուտում: Հանգուցեալի թաղման 40-րդ օրը կրկին կերուխում է լինում գերեզմանի վրայ: «Բառասունքին մի ոչխար են մորթում, առաւօտ շատ վաղ խաշու, շիւս և կաթնաճաշ եփում, բարձում ձիերի վրայ և տանում գերեզմանատուն: Այստեղ, գերեզմանի վրայ սփռոց են ձրգում և հաց, գինի, օղի, պանիր, գաթայ, մեղր, հալուայ և այլն շարում: Գալիս են բարեկամ կանայք և տղամարդիկ ինչպէս և քահանան: Կանայք չոքում են գերեզմանի շուրջը, լալիս և բարձր ձայնով ողբեր ասում: քահանան կատարում է քառասնէից կարգը, յետոյ սգաւորներից մինը գինի է ածում գերեզմանի վրայ և ապա մի մի բաժակ տալիս նախ տղամարդկանց և յետոյ կանանց, որոնք երկար բարեմադթութիւններ անելով խմում են և գերեզմանի վրայ դրուած ուտելեղէններից մի քիչ ուտում: Ապա նստում են գերեզմանի կողքին և ճաշում, ուտելով անից բերած ուտելեղէնները: Տղամարդկանցից յետոյ ճաշում են կանայք: Ի վերջոյ ճաշի մնացորդները թողնելով գե-

¹⁾ Ե. Լալայեան՝ Վարանդա, եր. 183.

ընդմանի վրայ եւ անըացած խմիչքներն ածելով զերեզմանի վրայ՝ վերադառնում են»¹⁾։

Բորչալուի հայերի մէջ աւելի ևս հետաքրքիր սովորութիւն կայ։ Ս. Քաչվերացի մեռելոցին հանդուցեալի բարեկամները հաւաքւում են սգատունը և սգուորների հետ գնում զերեզմանատուն։ Սգաւորը վերցնում է իւր հետ զանազան մրդեր և շարում զերեզմանի վրայ։ Երբ քահանան զերեզմանն օրհնում է, սգաւորը տալիս է սուրան մի բաժին այդ մրդերից և մնացածով հիւրասիրում ներկայ եղողներին. ապա մի քանի հատ թողնելով զերեզմանի վրայ, վերադառնում են տուն և ճաշում²⁾։ Բարերգի հայերը հաւատում են, որ շերը մեռելտան մը հաց տան զրոհն, աւելացած կերակուրները մեռելտանը թողնելու է, որովհետեւ մեռելին բաժինն է»³⁾։ Մեռելների հոգիները նոյնիսկ ինքեանք են գալիս իրենց ընտանիքի մօտ սնունդ վերցնելու։ Կեսարիայում շերը տան մէջ մեռել մը պատահի, առաջին գիշերը գաւաթ մը շուր կը դնեն այն սենեակը, ուր կը պառկէր հիւանդ եղած ատենը, կը կարծեն, թէ մեռելը նոյն գիշերը կը դառնայ ու այդ շուրը կը խմէ⁴⁾։ Զաւաթում ժողովուրդը հաւատում է, որ հիշտէք երեկոները (շաբաթ երեկոները) մութ տեղերում մարդիկ շուր չպէտք է խմեն, որպէսզի իրենց ազգականների հոգիները ծառաւ չմնան. նրանք խմում են ըոյթ մատի մօտ երկու ջրերի մէջ ջանդում ձեացող փոսով⁵⁾։ Զանգեզուրում շաբաթ երեկոները չի կարելի լուացք անել, վասն զի այդ ընտանիքի մեռեալները նոյն երեկոյ կարող են զրկուել ջրից. ժողովրդի հաւատով մեռելների հոգիները շաբաթ երեկոյ սովորաբար գալիս են շուր խմելու⁶⁾։

¹⁾ Ե. Լալայեան՝ Գանձակի գաւառ, Բ հատ. եր. 99—100.

²⁾ Նայն՝ Բորչալուի գաւառ—Ազգագրական Հանդէս, 1903 թ. գիրք X.

³⁾ Բիւրակ 1899 թ.

⁴⁾ Բիւրակ, 1899 թ.

⁵⁾ Ե. Լալայեան՝ Զաւաթ, եր. 206.

⁶⁾ Материалы по описанию жѣстностей и народ. Кавказа.

Հոգիներին կերակրելու հոգան այն աստիճանի է ընդհանրացած հայ ժողովրդի մնտրապաշտութեան մէջ, որ նոյն իսկ չի մոռացւում հարսանիքի ժամանակ, երբ բազմաթիւ հիւրերին օրերով կեր ու խումով են գոհացնում, յիշել մեռելներին և սոցա հոգիներին իրենց ուտելու փայր յատկացնելու հարսանեկան հացից հոգիներին բաժին հանելը պարզ երևում է մի հետաքրքրական սովորութիւնից, որ կոչւում է *արջտըմսդ*։ Զանգեզուրում հարսանեաց շաբաթի երեքշաբթի օրը տղայի տանը հաւաքւում են կանայք հաց թխելու։ Այս գերդաստանի ամենածեր կինը վերցնում է մաղը և մի քիչ ալիւր մաղում, նրան հետեւում է քաւոր կինը և ապա հացթուխը։ Երբ գալիս է աղ ձգելու ժամանակը՝ կանայք նորից շրջապատում են տաշտը և նոյն, ամենածեր պառաւը հանդիսաւոր կերպով վերցնում է մի մի բուռ աղ, ձգում է տաշտի մէջ, ասելով. «էս, այս ինչ մեռեալի հոգուն», «էս, այն ինչ մեռեալի հոգուն», «էս, բոլոր մեռելների օրհնութիւնն ընի էս տանս վրայ»։ Հոմանիշ սովորութիւն գոյութիւն ունի նաև Վարանդայի հայերի մէջ¹⁾։

Բայց կան մեռելներ, որոնք ոչ մի տէր-տիրական չեն թողել, իրենց վրայ տանող մի ազգական չունեն այլևս այս կեանքում։ Եւ անա ժողովուրդը, որ այնպիսի ակնածութեամբ ու սրբութեամբ է վերաբերում դէպի մեռեալներին կերակրելու հոգսը, այստեղ էլ հետևողական է մնում իւր հաւատալիքի մէջ. նա ջանում է 'ի միջի այլոց սփոփել ու հոգալ օտար մեռեալների հոգիների աննդի մասին։ Այդ նպատակով շատ հայաբնակ տեղերում հաց թխելիս խոնչի վրայ մնացած ալիւրը յետ չեն վերցնում, այլ ածում են թոնիրը անտէր մեռելների յիշատակի համար։

Մեռեալների հոգիներին կերակրելու և խմեցնելու հաւատալիքը, որ այժմս գոյութիւն ունի հայերիս մէջ, անշուշտ պատմական ժամանակներից է անցել ու մնացել

¹⁾ Ե. Լալայեան՝ Զանգեզուրի գաւառ, եր. 73. նոյն Վարանդա, եր. 95.

մինչև մեր օրերը: Դորան ապացոյց են հատուկտոր պատմական տեղեկութիւնները: Մովսէս Խորենացին մեզ աւանգում է, որ հայոց թագաւոր Վերջին Տիգրանը իւր եղբայր Մաթան քրմապետի գերեզմանի վերայ հրամայում է կառուցանել մի բազին, զոհարան, որտեղ բոլոր անցորդները կարող էին վայելել այն զոհերից, որոնք մատուցանում էին գերեզմանի վրայ¹⁾: Գերեզմանի վրայ խմելու սովորութեան մասին մեզ տեղեկութիւն է տալիս Վաղարշապատի 4-րդ ժողովում յօրինած (426 թ.) կանոնների ԻԱ յօդուածը. «մի թոյլ տացեն քահանայք զիննքրոս առնել ի սուգս մոռելոց և կամ կոծ դնել և աշխար առնել»²⁾: Մեռեալները խիստ պահանջող են իրենց ընտանիքի անգամներից, որպէսզի վերջիններն իրենց պարտականութիւններն արթուն կատարեն և ոչ մի կերպ մոռացութեան չտան: Հակառակ դէպքում հոգիները բարկանում են, տանջւում և միևնոյն ժամանակ տանջում իրենց ազգականներին: Այդ նպատակով հանգուցեալները երևում են երազների մէջ և յիշեցնում միշտ իրենց մասին: Բարեբրդի մէջ տիրում է հետեւեալ նախապաշարմունքը. «Երազիդ մէջ մեռել տեսած ժամանակդ, առաւօտուն կտոր մը հաց եկեղեցիին տանիքը նետէ ըսելով՝ ան բաժինդ, ան է»³⁾: Վարդաշէնի հայերի մէջ հաւատում են, որ եթէ հանգուցեալը մի քանի գիշեր շարունակ երևում է երազում՝ վերցրու մի կտոր սոխ, սխմիր հիւթը և տուր մեռեալին ասելով՝ «ահա վերցրու քո բաժինը, դնա, էլ մի գնա»⁴⁾: Նոյն հաւատալիքը գոյութիւն ունի Շիրակում: «Մէկ քիչ էլ հոգու բաներից խաբար տանք, ասաց փեսայ Մանուկը: Էս գիշեր էրազիս, եանի գիվա (իբր թէ) հէրս ու մէրս էկել էին իմ ու հարսի հետ կրկուսէին թէ՛ ինչի մէկ օր

¹⁾ Մովսէս Խորենացու՝ Հայոց պատմութիւնը, գիրք Բ, գլ. 42.

²⁾ Արեւ աբեղ. Մխիթարեան՝ Պատմութիւն ժողովոց Հայաստան. եկեղ. եր. 52.

³⁾ Բիւրակ, 1899 թ.

⁴⁾ Сборникъ матеріаловъ по описанію мѣстн. и народовъ Кавказа—Сувѣрія Варташенцевъ. 1892 г. Вып. 14.

հերիսայ շէք ղնի, որ զանք ուտենք... Վաղուց է որ հօրս ու մօրս ժամ-պատարագ չեմ էրել, օղորմիս չեմ առել, ես գիտեմ որ էտօրէն է. միտքս կայ էս պատի ելլն պատարագ առնեմ, մէկ բօլ-բօլամայ հերիսայ ղնել տամ, սաղ զեղը գայ ուտէ ու օղորմի տայ, ըսկի թէ խնդ՞ մնոնէն ների աչքը կըշտանայ, մեր տնէն կտրի, էլ չգտնու թէ որ չէ մէկ օր էլ կուգան տղոցս մէկի ձեռնէն բռնեն կըտանին. էն վախտը զուլում պոչը ղըզմըզ կ'համարի... Մեռելը որ գիշերը էրազին գայ ու տնեցոց մէկնումէկին կանչէ, ես ձեռնէն բռնի տանի՝ անպատճառ տնէն մէկը պիտի մեռնի...¹⁾։

Վերոյիշեալ բոլոր օրինակները պատկերացնում են մեր առաջ այն կրօնական աշխարհայեացքը, որ դարերի ընթացքում պահպանուել է հայերի մէջ, թէ հոգիները կարիք են զգում սնունդի։ Այդ սնունդը մեռեալները ստանում են անմիջապէս իրենց ընտանիքի անդամներից երկու եղանակով. կամ իրենք մեռեալներն են տանում իրենց հետ և գալիս վերցնում տանից իրենց բաժինը, կամ տնեցիքն են բերում ու թողնում նրանց զերեզմանների վրայ։ Երկու դէպքում էլ ընտանիքի անդամները հաւատում են, որ հոգիները վայելում են իրենց բաժինները։ Սակայն ժամանակի ընթացքում մեռեալներին կերակրելու գաղափարի վերաբերմամբ զարգացել է մի այլ հայեացք, որ աւելի է ընդհանրացած և գոյութիւն ունի գրեթէ բոլոր ժողովուրդների ու բոլոր կրօնների մէջ։ Այդ հայեացքի հիման վրայ կերակուրը դրւում է հանգուցեալներին ոչ անմիջապէս, այլ այդ կերակուրները ուտում են սգաւորները և թաղման հանգիսին մասնակցողները՝ ի յիշատակ մեռեալին։ Կերակրելու այս ձևը կատարւում է գլխաւորապէս թաղման ու մեռելոց յիշատակի օրերը և յայտնի է զանազան անուններով. հոգու հաց, մեռելահաց քէլէխ, սուբբ սեղան, սգասեղան, ողորմաթաս և այլն և

¹⁾ Էմինեան Ազգագրական Ժողովածու՝ Փշրանք Շիրակի ամբարներից՝ հատ. Ա. երես 180—181.

այլն, Հոգու հացի զաղափարը կայանում է նրանում, որ ընդունելով մեռելի սգաւորներից առաջարկած հացն ու ճաշը, ուսողները հաւատում են, որ այդ կերակուրների գորութիւնը աներևոյթ կերպով անցնում է հոգիներին և ոչ թէ իրենց ուսողներին: Թէ որ աստիճանի խորն է արմատացած հայերի մէջ հոգու հացի սովորութիւնն և սրան կցորդ հաւատալիքները՝ յայտնի է ամենքին և կարօտ չէ բացատրութեան: Բաւական է յիշել, որ նիւթապէս ամենակարօտ ընտանիքն անգամ իւր դրամական ուժերից վեր ծախքերի մէջ է ընկնում, միայն թէ քէլէխ՝ հոգու հաց պատրաստէ: Նրա նախապաշարումներով, եթէ որեւէ թաղում, որեւէ մեռելոց առանց այդ հացի կատարուի, մեռելը հանդերձեալ կեանքում ոչ մի հանգստութիւն չի գտնի, նրա հոգու յիշատակը կրիսխաուելի: Այդ սովորութիւնն իւր կրօնական աշխարհայեացքով միանգամայն հեթանոսական լինելով և հեթանոսական ժամանակները առաջ գալով, անցել է նոյնութեամբ և քրիստոնէական ժողովրդներին: Գրիստոնէական վարդապետութիւնը դաւանելով հոգիների գոյութեան սկզբունքը, թէև միանգամայն այլ աշխարհայեացքով, այնուամենայնիւ իւրացրել ու սրբագործել է մեռելոց յիշատակները: Ահա այդ մեռելոց յիշատակները քրիստոնէական եկեղեցւոյ լուսեայն համաձայնութեամբ հանապազ ուղեկցւում են հեթանոսական սովորութիւնների այն մնացորդներով, որոնք անուանեցինք մեռելահաց, հոգու հաց և այլն անուններով: Մեռեալների հոգիների կերակրելու ձևը խիստ բազմատեսակ բնաւորութիւն ունի. ուստի աւելորդ չի լինիլ այս տեղ մի առ մի առաջ բերել մեր արժարժած նիւթին վերաբերեալ հետաքրքիր օրինակներ:

Թաղման հանդէսը աւարտելուց յետոյ բոլոր ներկայ եղող հանդիսականները սգաւորների հրաւէրով դիմում են հանգուցեալի տունը և ճաշի նստում: Ծաշի վերջին միշտ սովորութիւն կայ ողորմաթափ խմելու. այս դէպքում բարեմաղթում են տան բոլոր հին և նոր ննջեցեաց հոգիներին

համար: Շատ գիւղերում սովորութիւն կայ, որ թաղման երկրորդ կամ երրորդ օրը, շառաւելապէս կանայք հաւաքւում են սգաւորի տանը և սգմէրների հետ գնում գերեզմանատուն, քահանային օրհնել տալիս գերեզմանը, լալիս, ողբեր ասում և ապա վերադառնում սգատուն՝ հաց ուտում¹⁾:

Թաղման եօթներորդ օրը այդ են կատարում պատարագով ու գերեզման օրհնելով. ապա բոլորը դալիս են սգատուն հաց ուտելու. Նոյնն է տեղի ունենում և քառասներորդ օրը, որ քառասունը է կոչւում, թէև շատ տեղերում այդ օրը հոգու հաց տալու սովորութիւնը վերացել է: Վերջապէս կան հինգ նաւակատիկներ իրենց մեռելների յիշատակով, երբ բոլորը սովորութիւն ունեն գերեզմանները օրհնել տալ և բարեկամներին ու հանդիսականներին մատաղ կամ այլ ուտելիքէն բաժանել:

Բացի վերոյիշեալ ընդհանրացած ու պարտաւորեցուցիչ մեռելոց յիշատակներից՝ հայ ժողովրդի սովորութիւնների մէջ գոյութիւն ունեն նաև այլ, որոշեալ օրեր, նոյն նպատակով՝ մեռելներին յիշել և կերակրել: Աւագ ուրբաթ օրը սգաւորներն իրենց բարեկամների հետ գնում են գերեզմանը օրհնել տալիս, վերադառնում սգաւորի տունը և հաց ուտում: Այդ օրը, ինչպէս Բորչալուի ու Գանձակի գաւառի հայերը, անեկ բաղարճ են թխում, որովհետև շանեկ հացը մեռելի բաժին է: Մեծ պասի առաջին օրը Սիսիանում բոլոր գիւղացիները գնում են եկեղեցու դաւիթը, տանելով խմիչքներ և կերակուրներ: Այստեղ քահանան բոլոր ննջեցեալների համար ընդհանուր հոգոց է ասում, որից յետոյ բոլորեքեան խառը նստում, ընրածներն ուտում են և ապա գնում իւրաքանչիւրը իւր ննջեցեալը օրհնել տալիս¹⁾:

¹⁾ Լալայեան՝ Բորչալուի գաւառ, — Ազգագր. Հանդէս, 1903 թ. գիրք X:

¹⁾ Ե. Լալայեան՝ Սիսիան, եր. 148 և 154.

Ուշադրութեան արժանի են նաև սզասեղանները, որ տիրող սովորութեան համեմատ հանգուցեալի հեռու և մօտիկ ազգականները ուղարկում են սզատուն: Սզասեղանը մեծ մասամբ բաղկացած է լինում կերակրներից և խմիչքներից: Սզասեղանն ուղարկում են հենց թաղման երեկոյին (Բորչալիում), կամ միւս օրը՝ այդ կատարելիս (Ջանգեզուրում, Գանձակի գաւառում), վեցերորդ օրը երկոյեան (Վարանդայում): Այսպիսով մեռեալների հոգիներին կերակրելու և սնունդ հայթայթելու հոգսերին մասնակից է լինում ամբողջ ազգականութիւնը: Սա մի մնացորդ է ցեղական սերնդական կազմակերպութեան, ուր սերնդին պատկանող բոլոր անդամները խստիւ պահպանում և կատարում էին սերնդական-ցեղական պաշտամունքին վերաբերեալ հաւատալիքները, մանաւանդ ցեղին ու սերնդին պատկանող մեռեալների հոգիների վերաբերմամբ:

Ներկայ գլխում առաջ բերած օրինակները կարծում եմք միանգամայն բաւական են, որպէսզի լուսարանն հայ ժողովրդի կրօնական աշխարհայեցողութեան մէջ տիրապետող մատերիալիստական սկզբունքները: Հանդերձեալ կեանքի մասին գոյութիւն ունեցող մատերիալիստական հայեացքները մի ընդհանրական երևոյթ են կազմում, երեւոյթ, որ տեղ է ունեցել ոչ միայն նախնական ժողովուրդների մէջ, այլև կուտուրապէս ստոր կանգնած ժամանակակից բազմաթիւ ժողովուրդների կրօնական փիլիսոփայութեան իմաստն է կազմում: Ուստի զարմանալի չէ որ հայկական իրականութեան մէջ, որ իրենից տակաւին չի թոթափել նախնական դարևոր արադիցիաները, մենք գտնում ենք զծեր ու նախապաշարունակներ, որոնք ընդունում են հայ ռամկական կրօնական հաւատալիքների մատերիալիստական նշանակութիւնը:

